

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՔԻՈՆ

## ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ)  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ  
(1918-1920 թթ.)

Մազիստրատուրայի «Հայոց պատմություն»  
մասնագիտացմամբ դասընթացի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

## ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ)  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ  
(1918-1920 թթ.)

Մազիստրատուրայի «Հայոց պատմություն»  
մասնագիտացմամբ դասընթացի

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2010

Հրատարակության և երաշխավորել ԵՊՀ  
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհուրդը

Կազմեց՝ պատմ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը

Ծրագիր: «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները  
Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազ-  
մավորումների հետ (1918 -1920թթ.)» – Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 12 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.  
© Կազմողի համար, 2010 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Դասընթացի առարկան, նպատակն ու խնդիրները, առանձնահատկությունները, ուսումնասիրության գիտական կարևորությունը և քաղաքական հրատապությունը:

Ժամանակագրական առումով դասընթացն ընդգրկում է նախկին Ռուսական կայսրության տարածքում ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների և դիվանագիտական գործընթացների մոտ երկու տարվա պատմություն՝ 1918թ. հունիսից մինչև 1920թ. ապրիլը, այսինքն Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումից մինչև Կամավորական բանակի պարտությունը: Պատմական գործընթացը բաժանված է առանձին ժամանակահատվածների՝ հիմք ունենալով քաղաքական իրադրության փոփոխությունները:

Դասընթացը ներկայացնում է այդ հարաբերությունների հաստատման դժվարությունները, քաղաքական և գաղափարական իրարամերժ մտեցումները, որոնք պայմանավորված էին ինչպես պատմական բարդ ժամանակաշրջանով, այնպես էլ Ռուսաստանում և Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով:

## ԹԵՄԱ 1

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

(1918 թ. հունիս-նոյեմբեր)

#### *ա) Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական կացությունը:*

Հայաստանի անկախացումը: Հանրապետության գոյության առաջին շրջանում երկրի անկախության հռչակագրի պաշտոնական ընդունման ձգձգման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Ազգային անկախ պետականության հիմքի ստեղծումը՝ Հայաստանի Խորհրդի և կառավարության կազմավորումը:

Դիվանագիտական ծառայության կազմակերպումը, Արտգործնախարարության կառուցվածքը: Հ. Քաջազնունու կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Հարաբերությունները Եռյակ դաշինքի երկրների հետ: Հարաբերությունները հարևաններ երկրների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Անդրկովկասյան երեք հանրապետությունների արտաքին քաղաքականության տարբեր դիրքորոշումները Ռուսաստանի նկատմամբ:

#### *բ) Ռուսաստանի հարավի հետ հարաբերությունների հաստատման առաջին քայլերը:*

Հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ կառավարության պաշտոնական դիրքորոշումը Հ. Քաջազնունու կազմած ժամանակավոր կառավարության ծրագրում: 1918թ. օգոստոսին Հայաստանի Խորհրդում հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ կառավարության դիրքորոշման չիրապարակման պատճառները: Ռուսաստանի հարավի հետ հանրապետության հարաբերությունների գաղտնի կիսապաշտոնական բնույթը: 1918թ. հունիսի 3-ին Բաթումում Ալ. Խատիսյանի ստորագրած պարտավորագիրը: Ռուսաստանի խորհրդային և հակախորհրդային կառավարությունների հետ հարաբերությունների հաստատման պատմական անհրաժեշտությունն ու նախադրյալները:

Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու  
Հայաստանի կառավարության փորձերը:

Ս. Վրացյանի առաքելությունը Հարավային Ռուսաստանում 1918թ.  
ամռանը և կապերի հաստատման առաջին քայլերը՝ կամավորական բա-  
նակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Հայաստանի իշխա-  
նությունների վարած քաղաքականությունը «Հատուկ խորհրդակցության»  
նկատմամբ: Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների  
հետ հարաբերությունների հաստատման դժվարությունները, առկա քա-  
ղաքական ու գաղափարական իրարամերժ մտտեցումները: Կամավորա-  
կան բանակի քաղաքական ծրագիրը՝ «Միասնական, անբաժանելի Ռու-  
սաստանի» վերականգնման խնդիրը, ռազմավարությունը, նպատակները,  
վերաբերմունքը Անդրկովկասի հանրապետությունների անկախության  
նկատմամբ: Երևանում ռուսական հետախուզական գաղտնի խմբի ստեղծ-  
ման նպատակը և գործունեությունը (Մ.Զինկևիչ):

Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության»  
հետ ռազմաքաղաքական և առևտրատնտեսական կապերի հաստատումը:  
Վերջինիս նկատմամբ Վրաստանի և Ադրբեջանի վերաբերմունքը: Հայկա-  
կան բանակի շտաբի պետի օգնական Վլասևի ոչ պաշտոնական գոր-  
ծուղումը Եկատերինոդար և նրա առաքելության նպատակը: Կամավորա-  
կան բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցչութ-  
յան հիմնումը Երևանում: Յասսիի խորհրդակցությունը և Հայաստանի իշ-  
խանությունների դիրքորոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ

ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

(1918թ. դեկտեմբեր – 1919թ. հուլիս)

*ա) Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:*

Առաջին աշխարհամարտի ավարտը: Քաղաքական նոր իրադրությունը տարածաշրջանում; Հայաստանի Հանրապետության արևմտյան կողմնորոշումը: Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցությունը Փարիզի վեհաժողովում (Ա. Ահարոնյանի նախագահությամբ): Հարաբերությունների պահպանումը և զարգացումը Կամավորական բանակի հետ: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների ստեղծումը Ռուսաստանի հարավում:

Բրիտանական զորամասերի մուտքը Անդրկովկաս: Հայաստանի Հանրապետության նկատմամբ Համաձայնության երկրների վերաբերմունքը, Անդրկովկասում նրանց հակամարտությունները (հիմնականում Մեծ Բրիտանիայի ու Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» միջև) և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակի վրա: Անդրկովկասը ռուսական ազդեցությունից ազատելու Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Մեծ Բրիտանիան և հայ-ռուսական հարաբերությունները: Հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ անգլիական զինվորական հրամանատարության վերաբերմունքը: Բրիտանական զինվորական հրամանատարության հակահայկական քաղաքականությունը և Վրաստանի ու Ադրբեջանի վերաբերմունքը: Հանրապետության ղեկավարության նոր քաղաքականությունն ու դիվանագիտական քայլերը Ռուսաստանի հարավի և Մեծ Բրիտանիայի զինվորական հրամանատարության նկատմամբ:

*բ) Հայ-վրացական պատերազմը և Կամավորական բանակի ու Մեծ Բրիտանիայի վերաբերմունքը:*

Հայ-վրացական պատերազմի պատճառները: Մեծ Բրիտանիայի հակառուսական և հակահայկական դիրքորոշման դրդապատճառները պատերազմի ընթացքում: Տարածաշրջանում հաստատվելու Ռուսաստանի հարավի վարած քաղաքականությունը: Կամավորական բանակի նկատմամբ Հայաստանի Հանրապետության զգուշավոր քաղաքականության դրդապատճառները:

Մեծ Բրիտանիայի օգնությունը Վրաստանին: Հայ-վրացական խորհրդածոդովը (1919թ. հունվար): Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պարտությունը:

**գ) Կարսի խնդիրը և Ռուսաստանի հարավի դիրքորոշումը:**

Մուղլուսի զինադադարի որոշումը գրավյալ տարածքների վերաբերյալ: Մեծ Բրիտանիայի առաքելությունն այդ խնդրում: Ջ. Ուոքերի 8 հրահանգները: Ալեքսանդրապոլի 1919 թ. հունվարյան համաձայնագիրը և Ջ. Ուոքերի կողմից այն չեղյալ հայտարարելու (հունվարի 23-ին) դրդապատճառները: Կարսի մարզում ժամանակավոր մահմեդական կառավարության՝ «Շուրայի» հռչակումը: Կարսի մարզի նկատմամբ Վրաստանի նկրտումները: Բրիտանական զորահրամանատարության հակահայկական գործելակերպը: Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերի բախումը Կարսի հարցում: Կամավորական բանակի ձգտումը Կարսի նկատմամբ: «Շուրայի» ներկայացուցիչների և Հայաստանի կառավարությունում զինվորական ու քաղաքական հարցերով Ռուսաստանի հարավի ներկայացուցիչ գնդապետ Լեյլիի գաղտնի բանակցությունները, նրա հակահայկական գործունեությունը: Մեծ Բրիտանիայի նոր քաղաքականությունը «վստահելի» մահմեդականների նկատմամբ: Կարսի հանձնումը Հայաստանին:

**դ) Միացյալ Հայաստանի անկախության հռչակումը և Ռուսաստանի հարավի վերաբերմունքը: Հարաբերությունների ստեղծումը:**

Անկախության ակտի պաշտոնական հռչակման ձգձգման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները և հետևանքները Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում: Անկախության հարցում արևելահայերի և արևմտահայերի վերաբերմունքի տարբերությունը: Այդ հարցում ռուսական քաղաքական գործոնի դերը: Մահմեդական տարրերի վերաբերմունքը հայկական պետականության նկատմամբ: Պատմական



ակտի հռչակման նպաստավոր պայմանները: Հայկական տարածքների ընդարձակումը: Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի վերաբերմունքը հրապարակվելիք անկախության ակտի նկատմամբ (1919թ. ապրիլ): Հայաստանի խորհրդի որոշումը չմիջամտելու բոլշևիկների և դենիկինյանների պայքարին: «Միացյալ Հայաստանի անկախության ակտի» հրապարակումը: Ներքին բարեփոխումները, ռուսական ազդեցության թուլացումը: Նոր փուլ հայ-ռուսական հարաբերություններում: Կամավորական բանակի հետ պաշտոնական շփումների ստեղծումը:

*ե) Վրաց-ադրբեջանական հակադենիկինյան ռազմական դաշինքը և Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը:*

Կամավորական բանակի հաստատվելը Հյուսիսային Կովկասի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանների վրա: Հայաստանի կառավարության վերաբերմունքը Կամավորական բանակի կողմից գրավված Լեռնականների Հանրապետության նկատմամբ: Վրաստանի և Ադրբեջանի առաջարկը Հայաստանի Հանրապետությանը՝ միանալու ձևավորվող հակադենիկինյան ռազմական դաշինքին: Այդ դաշինքի ձևավորման նկատմամբ Մեծ Բրիտանիայի վերաբերմունքը: Վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքին Հայաստանի Հանրապետության չմիանալու դրդապատճառները և հետևանքները: Վրաց-ադրբեջանական 1919թ. հունիսյան ռազմական դաշինքը:

Կամավորական բանակի նոր մարտավարությունը Անդրկովկասի նկատմամբ: 1919թ. հուլիսի 2-ի «Հատուկ խորհրդակցության» գաղտնի հրահանգը՝ համագործակցության ճանապարհով տիրելու Անդրկովկասի տնտեսական լծակներին և ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներին:

### ԹԵՄԱ 3

#### ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԲԻՐԻ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԵՏ

*ա) Հարաբերությունները Միբիրի և Հեռավոր Արևելքի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ:*

Օովակալ Ա. Կոլչակի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության հաստատումը: Դիվանագիտական ներկայացուցիչ Գրիգոր Չամոյանի հանդիպումը Ա. Կոլչակի հետ: Միբիրում և Հեռավոր Արևելքում Գ. Չամոյանի դիվանագիտական գործունեությունը: Հյուպատոսական ծառայությունների հիմնումը: Հայ գաղութի հետ կապերի հաստատումն ու ամրապնդումը: Միբիրի և Հեռավոր Արևելքի հայ ներկայացուցիչների համագումարը: «Երկիր» բաժնետիրական ընկերության հիմնումը: «Вестник Армении» («Բանբեր Հայաստանի») շաբաթաթերթի լույս ընծայման նպատակը: Ա. Կոլչակի պարտությունը: Դիվանագիտական ներկայացուցչության կապերի հաստատումը Միբիրի և Հեռավոր Արևելքի խորհրդային երկրամասերի կառավարությունների հետ:

*բ) Հարաբերությունների վերականգնումը «Հատուկ խորհրդակցության» հետ:*

Հայաստանի Հանրապետությունը «Երկաթե» օղակում: Թուրքիայի և Ադրբեջանի ագրեսիվ նոր ձգտումները: Կառավարության դիվանագիտական քայլերը երկրի շրջափակումը վերացնելու ուղղությամբ: Ռուսաստանի հարավի մարտավարությունը Անդրկովկասում: Հայաստանի կառավարության վրա Կամավորական բանակի քաղաքական ազդեցության փորձերը: Երևանում Ռոստովի պետական բանկի մասնաճյուղի ստեղծման նախագիծը: Հայկական բանակին զինամթերքի հանձնման պատճառներն ու նպատակները:

Գնդապետ Մ. Զինկևիչը Եկատերինոպոլում: Հայաստանի Հանրապետությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի ներկայացուցչության հիմնումը (ներկայացուցիչ՝ Մ. Զինկևիչ) Երևանում, պաշտոնական

հարաբերությունների վերականգնումը: Եկատերինոդարում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթեյյանի գործունեությունը:

*գ) Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը: Կոնֆեդերացիայի (համադաշնության) ստեղծման հարցում Հայաստանի դիրքորոշումը:*

1919 թ. աշնանը Հայաստանի Հանրապետության նկատմամբ ստեղծված նոր սպառնալիքը: Անգլիական զորքերի հեռանալը Անդրկովկասից: Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի բարեկամական հարաբերությունները: Հայ-վրացական մերձեցման խափանումը: Վրաց – ադրբեջանական ռազմական երկրորդ գաղտնի դաշինքը (1919թ. սեպտեմբեր): Թուրք-ադրբեջանական ռազմական գաղտնի դաշինքը (1919թ. հոկտեմբերի 29): Թուրք-վրացական-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցությունը և Կամավորական բանակի դիրքորոշումը: Ռուս-հայկական ռազմական դաշինքի առասպելը: 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին գեներալ Ա. Դենիկինի նտտաները Ադրբեջանի կառավարությանը: Ադրբեջանի հարձակումը Զանգեզուրի վրա: Ա. Դենիկինի նոյեմբերի 9-ի հրամանի հետևանքները և նշանակությունը: Քաղաքական նոր իրադրությունը տարածաշրջանում և երեք հանրապետությունների միջև կոնֆեդերացիայի հարցը: Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը: Կամավորական բանակի ռազմական անհաջողությունները 1920թ. սկզբին և կոնֆեդերացիայի հարցը:

*դ) Ա. Դենիկինի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության փաստական ճանաչման նկատմամբ:*

Խորհրդային բանակի հաջողությունները: Քաղաքական նոր իրադրությունը Անդրկովկասում: Բոլշևիկյան շարժումը կասեցնելու փորձերը: Անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների de facto ճանաչումը: Հայաստանի կառավարության չեզոքության պահպանումը Կամավորական բանակի և Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Խորհրդային բանակի հաղթանակը: Կամավորական բանակի դիվանագիտական ներկայացուցչության լուծարումը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական նոր կողմնորոշումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
2. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
3. Ռուբին, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, Թեհրան, 1982:
4. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005:
5. Ջոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ.դեկտեմբեր-1920թ.ապրիլ), Երևան, 2002:
6. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999:
7. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920թթ.), Երևան, 2002:
8. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920թթ.), Երևան, 2006:
9. Деникин А., Очерки русской смуты: Белое движение и борьба добровольческой армии. Май-октябрь 1918, Минск-Харвест, 2002.
10. Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах.-Книга 3/ т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, Москва, 2003.
11. Волков С., Белое движение. Энциклопедия гражданской войны – СББ, Москва, 2003:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՀԱԿԱՌԱՇԵՎԻԿՅԱՆ) ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱԶՄՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ (1918-1920 թթ.)

Հրատ. խմբագիրներ՝	Հ.Բ. Պետրոսյան, Մ.Գ. Յավրյան
Տեխ. խմբագիր՝	Վ.Զ. Բղոյան
Համակարգչային ձևավորող՝	Լ.Բ. Մելիքյան

Ստորագրված է տպագրության 29.01.2010 թ.:  
Չափսը՝ 60x84<sup>1/16</sup>: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 0.6 մամուլ,  
տպագր. 0.8 մամուլ= 0.7 պայմ. մամուլի:  
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 13:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1: